միջոցով կնքեցին սույն **պայմանագիրը** (այսուհետ՝ Պայմանագիր) ներքոհիշյալի վերաբերյալ:

I. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Պայմանագրի առարկան Տարածքային կենտրոնի կողմից Գործատուին տրամադրվող միանվագ փոխհատուցումն է՝ Գործատուի մոտ առկա թափուր աշխատատեղը Ադրբեջանի կողմից 2016 և 2020 թվականներին սանձազերծված ռազմական գործողություններին մասնակցած գործազուրկ անձով (այսուհետ՝ Շահառու) համալրելու նպատակով:

2. Պայմանագրով Գործատուն պարտավորվում է Շահառուին ընդունել աշխատանքի՝ Պայմանագրով սահմանված ժամկետով և պայմաններով, իսկ Տարածքային կենտրոնը Գործատուին է տրամադրում միանվագ փոխհատուցում՝ Պայմանագրով սահմանված չափով և ժամկետում:

II. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Տարածքային կենտրոնը պարտավորվում է՝

1) ըստ անհրաժեշտության, Գործատուին տրամադրել համապատասխան խորհրդատվություն՝ Ադրբեջանի կողմից 2016 և 2020 թվականներին սանձազերծված ռազմական գործողություններին մասնակցած գործազուրկ անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպման և զբաղվածության ապահովման ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) շրջանակներում իրականացվող և Պայմանագրով սահմանված՝ Շահառուի աշխատանքի տեղավորման համար Գործատուին միանվագ փոխհատուցում տրամադրելուն առնչվող հարցերի, դրանց շրջանակներում Գործատուի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ,

2) Գործատուին վճարել միանվագ փոխհատուցում՝ Պայմանագրի 7-րդ և 8-րդ կետերով սահմանված չափով, կարգով և ժամկետում,

3) չմիջամտել Գործատուի և Շահառուի միջև ծագած աշխատանքային հարաբերություններին և Գործատուի կողմից իրականացվող գործունեությանը,

4) Գործատուի կողմից ընտրված ժամկետում միանվագ փոխհատուցման գումարը սահմանված կարգով փոխանցել Գործատուի բանկային հաշվի համարին,

5) եռամսյակը մեկ անգամ իրականացնել Գործատուին միանվագ փոխհատուցում տրամադրելու միջոցով ծրագրի կատարման ընթացքի մոնիթորինգ,

6) չհրապարակել կամ երրորդ անձանց որևէ կերպ հասանելի չդարձնել Պայմանագրի կատարման ընթացքում իրեն հայտնի դարձած այն տեղեկությունները և տվյալները, որոնք Գործատուի համար կրում են գաղտնի բնույթ և որոնց մասին Տարածքային կենտրոնը տեղեկացվել է նախապես՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի:

4. Տարածքային կենտրոնն իրավունք ունի՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Գործատուից ամբողջությամբ ստանալ Պայմանագրի 7-րդ կետով սահմանված և Գործատուին վճարված գումարը՝ Որոշման հավելվածի 30-րդ կետում նշված դեպքերում,